681-ԱԶ

# ՀԱՄԱՌՕՏՈՒ ԹԻՒՆ ՎԻՊԱՍԱՆՈՒԹԵԱՆ ՍՈՒՐԲ ԳՐՈՑ ։

Յօրինեալ ՚ի ՀԵ. հարցմանց և պատասխանս եղոյ՝ յօգուտ մերազնեայ համբակաց.

Զոր հարկ է ամ՝ ուսուցչաց հայոց լեզուի ուսուցանել աշակերտաց՝ զկնի քրիստոնէական վարդապետութեան.

Թարգմանեալ ՚ի Ռուսաց լեզուէ ՚ի Հայերէն.

՚Ի հայրապետութեան լուսաւորչական մօրն մերոյ սրբոյ գահին Էջմիածնի Տն Եփրեմի Ամենայնի և Սրբազնական Կաթուղիկոսին ամ Հայոց. Եւ յԱռաջնորդութեան հիւսիսային ազգին Հայոց Տն Յովհաննու Սրբզն Արքեպիս. և նոյն Աթոռոյ ծայրագոյն Նուիրակի.

Վերստին տպագրեալ սրբագրութ՝ ըստ հրամանի Կառավարչաց հոգևոր բարեկարգութե ։

Արդեամբք և ծախիւք երկուց առաքինազարդ եղբարց՝ պարոն Յովհաննիսի և պարոն Մանուէլի Աղափարեան Քամալ եանց ։

Յամի Տեառն 1821. Իսկ ՚ի Բուն Հայոց ՌՄՀ.

՚Ի տպարանի Սբյ Էջմիածնի՝ որ ՅԱՍՏՐԱԽԱՆ.

9637-57

28+ 22

### Նախերգանք առ Եռանաւէր Վերծանօղս.

Որոց լուսաւորեալ են բնական լուսով, քա՛ղցր է ճանաչել՝ թէ ո՛վ ստեղծ զտիեզերս. և զորս 'ի նոսա են արարածք. Իսկ ներհակ այսմ. որք խաւարաւ են մածեալ աղխտուն, չունին ինչ փոյթ՝ թէ արդեօք որո՞յ է գործ այս հիանալի կերպարանեալ ծի, կամ ինքն իսկ յորում մարդ, յումմէ՞ արարչագործեալ. այլ՝ ուտէ և ըմպէ անասնաբար. Սակայն որովհետև դարուս շրջան պահանջէ գիտել իւրաքանչիւրոց զիւր կարևորսն, ազգասիրաց փոյթ եղև յօգուտ և 'ի պէտս համազգեաց յօրինել զայս համառօտու վիպասանութեան գրոց. Զոր իւրաքանչիւրոք՝ իբրև զհայելի իմն առաջի աչաց ունելով ծանիցէ զարարիչն իւր, զինքն, և զայլ համ արարածս նր. զի ճանաչելով փառաբանեսցէ զամենատուր անուն նորա,

նախ՝

Նախ՝ ըստորում մարդ, երկր՝ ըստորում քրիստոնեայ. Ուրեմն ընկալարուք զայն դուզնաքեայ պտուղ ազգասիրութեան՝ գանձելով զորս պիտանացու. Եւ անքանի՛ր առնելով զորոց ուսմնասէր եւ աւելո՛րդ դատել հաճեսջիք.

# ԳԼՈՒԽ Ա.

## Յաղագս էութեանն Աստուծոյ.

Հարցումն.

Զի՞նչ է Աստուած.

Պատասխանի.

Անհուն, անեղ, անսկիզբն և անվախճան էութիւն. գերամբարձ, ամենակարող և անպատճառ գոյութիւն, և հոգի անիմանալի ՚ի գերագոյն աստիճանի.

Հարց. Ուստի՞ գիտել մարթ է՝ թէ է՛ Աստուած.

Պատ. Ըստ մեծի մասին ՚ի հաւատոյ, և մասամբ ինչ ՚ի քննութենէ՝ խոստովանելով միշտ անքննին.

Հարց. Զի՞նչ իմասցուք (հոգւովն.)

Պատ.

Պատ. Թէ է Աստուած էութիւն՝ որ ՚ի բոլոր աշխարհի ոչ է հնար ընդ միում իրէ համեմատել.

Հարց. Ասա՛ զի՞նչ իմաստասիրելի է.

Պատ. Թէ Աստուած է ամենիմաստ, ամենա-բարի, ամենիկարօղ, ամենագէտ և յաւիտենական.

Հարց. Զի՞նչ ևս մարթ է ասել զկա-տարելութեանցն Աստուծոյ.

Պատ. Աստուծոյ՝ ըստ ամենագիտին՝ քա-ջայայտ են ամենայն մարդկային պէտք, և նմա՛ գիտէ զամենայն գործս. տեսա-նէ զ՟ ամենայն, և նմա՛ միայնում ամենայն գաղտնիք մարդկան են բացայայտ.

Հարց. Զի՞նչ ևս ստորոգին զԱստուծոյ.

Պատ. Արդարադատութիւն, գթածութիւն և ամենաբարութիւն.

Հարց. Յի՞նչ ենթակայանայ Աստուածային արդարութիւնն.

Պատ. Յայսմիկ. զի պսակէ զբարե-գործս, և դատապարտէ զչարա-գործս. կամ որ նոյն է՝ վարձս բա-րեաց հատուցանէ արդարոց. և պատուհասէ մահու՝ մեղաւորաց.

## ԳԼ. Բ.

Յաղագս արարչագործութեանն աստուծոյ.

Վարդ. Ո՞վ ստեղծ զաշխարհս.
Պատ. Աստուած.
Վարդ. Յորմէ՞ ստեղծ.
Պատ. Յոչընչէ.
Վարդ. Ո՞րպէս ստեղծ զայն.
Պատ. Բանիւն իւրով.
Վարդ. Առ ի՞նչ վախճան:
Պատ. Առ փառաբանութեն անուանն իւր. և յայտնելոյ արարածոց զբարութիւն ածութեն.
Վարդ. ՚Ի քանի՞ աւուրս արար զայն.
Պատ. ՚Ի վեց աւուրս.
Վարդ. Զի՞նչ արար յառաջին աւուր.
Պատ. Զերկինս և զերկիր, միանգամայն և զլոյս.
Վարդ. Զի՞նչ արար յերկրդ աւուրն.
Պատ. Զհաստատութիւն երկնից.
Վարդ. Զի՞նչ յերրորդ աւուր:
Պատ. Բաժանեաց զջուրսն ՚ի հողոյ, և հրամայեաց երկրի արտադրել ըզ-

բոյս

բոյս և զտունկս.

Հարց. Զի՞նչ ՚ի չորրորդ աւուր.

Պատ. Զարեգակն, զլուսինն և զաստեղս.

Հարց. Զի՞նչ ՚ի հինգերորդ աւուր.

Պատ. Զթռչունս երկնից, և զձկունս ծովու.

Հարց. Զի՞նչ արար ՚ի վեցերորդ աւուր.

Պատ. Գազանս զերկրայինս կենդանիս, և առաջին զմարդն ըստ պատկերի իւր.

Հարց. Արա՞ր ինչ և յաւուր եօթներորդի.

Պատ. Յետ ստեղծագործելոյ զարարածս զայս օրհնեաց. այլ ևս նոր ազգ ինչ ո՛չ արար.

Հարց. Յորժա՞մ ստեղծ Աստուած զմարդն առաջին.

Պատ. Զմարմինն ՚ի հողոյ. իսկ զհոգին ըստ պատկերի և ըստ նմանութեան իւր.

Հարց. Ընդէ՞ր արար Աստուած զմարդն.

Պատ. Որ զի ծանիցէ զնա և սիրեսցէ. նաև երկիցէ պաշտամանց յաւէտ.

Հարց. Յորժա՞մ արարաւ Եւայն.

Պատ. ՚Ի կողէն Ադամայ.

Հարց. Ընդէ՞ր այդպէս.

Պատ. Առ ՚ի ցուցանել՝ թէ երկոքեան

նոքա ՚ի միոյ մարմնոյ են.

Աշակ. Զի՞նչ էր դրախտն երկրային.

Վարժ. Էր տեղի ծառատունկ և վայե-
լուչ. զոր շնորհեաց տ՟ր ա՟ծ ա-
դամայ և եւայի՝ ՚ի բնակութիւն.

Աշակ. Յո՞րպիսի կացութեան էին նոքա անդ.

Վարժ. ՚Ի բարի կացութեան, և էին անմահ.

---

## ԳԼ. Գ.

Յաղագս յանցանաց նախաստեղծ ծնողացն.

Աշակ. Մնայի՞ն արդեօք նոքա միշտ ՚ի
նմին կացութեան.

Վարժ. Ո՛չ. այլ՝ կորուսին զայն անցա-
նելով զպատուիրանաւն ա՟ծոյ.

Աշակ. Ո՞վ եղև պատճառ նոցա.

Վարժ. Սատանայ՝ որ պատրեաց զեւայ
ճաշակել զպտուղն մահու, որ
արգելեալն էր յա՟յ. և եւայ հա-
ւանեցոյց զայրն իւր, և կերին.

Աշակ. Ո՞չ պատժեաց ա՟ծ զնոսա վ՟ն ան

աւելոյն.

Պատ. Արտաքսեաց զնոսա յերկրաւոր դրախտէն.

Հարց. Եթո՞ղ մխիթարութիւն ինչ նոցա յայնպիսի կացութեան անդ.

Պատ. Այո՛. քանզի խոստացաւ նոցա ը ժամանակին՝ առաքել զՓրկիչ, զի ջախջախեսցէ զիշխանութիւն սատանայի.

Հարց. Յո՞րպիսի կացութեան մնացին նոքա յետ պատուիրանազանցութեան.

Պատ. ՚Ի մեծի թշուառութեան՝ ը հոգւոյ եւ ը մարմնոյ.

Հարց. Զի՞նչ չարիք հասին մարմնոյ նոցա.

Պատ. Աշխատանք մեծ, անհանգիստ կեանք, ցաւ եւ մահ իսկ.

Հարց. Հոգւոյ նոցա զի՞նչ չարիք հասին.

Պատ. Մթութիւն մտաց, եւ փոխարկութիւն զուարճութեանց.

Հարց. Աստի զի՞նչ յառաջացան.

Պատ. Ամենայն մեղք.

Հարց. Իսկ ՚ի մեղաց զի՞նչ.

Պատ. Մահ մշտնջենաւոր.

Հարց. Ո՞յք էին նախնեացն զաւակք նոցա.

Պատ. Աբէլ եւ Կայէն.

Հարց. Ո՞րք ծնան նոքա զնոսա.

Պատ. Յետ տղա՛յ լինելութեան իւրեանց.

Հարց. Ո՞չ են արդեօք որդիքն ց մասնակից մեղաց նոցին.

Պատ. Ոչեն. ո՛չ միայն որդիք նոցա, այլ եւ որդիք որդւոց նոցին.

Հարց. Տակաւին տեւէ՞ այս մասնկցութի.

Պատ. Անփոփոխապէս իւրաքանչիւր ոք այսու մեղօք ծնանի.

## ԳԼ. Դ.

Յաղագս Ջրհեղեղէ, եւ բնական օրինացն.

Հարց. Ո՞ եղեւ առաջին մարդասպան յաշխարհի.

Պատ. Կայեն. որ սպան զեղբայրն իւր զԱբէլ.

Հարց. Ընդէ՞ր սպան զնա.

Պատ. Քանզի մախայր ը̃ առաքինութե փոքր եղբօրն՝ զոր եւ Այծ սիրէր.

Հարց. Արդեօք ամ՛ մարդ իսկ չարաբա-րո՞յ եղեւ նման կայենի.

Պատ.

Պատ. Գրե՛թէ առհասարակ՝ բաց ՚ի միոջէ.

Հարց. Եւ ո՞վ էր արդեօք մինն այն.

Պատ. Նահապետն Նոյ՝ որ և հաճոյ էր Այ.

Հարց. Ո՞պ պատժեաց զնոսա Տ՟ր.

Պատ. Ջրհեղեղաւ.

Հարց. Ջրհեղեղն զի՞նչ էր.

Պատ. Մեծագոյն հեղեղք ջուրց. որք ծածկեցին զա՟մ երկիր.

Հարց. Մարդիկ զի՞նչ եղեն.

Պատ. Ընկղմեցան և մեռան.

Հարց. Միւս կենդանիք զի՞նչ եղեն.

Պատ. Նմանապէս.

Հարց. Նոյ նահապետն զիա՞րդ ապրեցաւ.

Պատ. Պահեաց զնա Տ՟ր ՚ի տապանին.

Հարց. Զի՞նչ էր տապանն նոյն.

Պատ. Նաւ մեծ պատեալ յերկուց կողմանց՝ ներքուստ և արտաքուստ.

Հարց. Նա՞ միայն փրկեցաւ անդ.

Պատ. Ինքն և ընտանիք իւր.

Հարց. ՚Ի կենդանեաց ևս եղե՞ն փրկեալ.

Պատ. Եօթն եօթն ՚ի մքր. և երկու երկու յանմքր ա՟մ տեսակ կենդանեաց ապրեցան՝ ը՟ կամացն Այ.

Հարց.

Հարց. Ամենայն որք ընդ մեր մարդ՝ զի՞նչ առ-
նչակցութիւն ունին ընդ մեզ.

Պատ. Զեղբայրութեամբ. մի՛ զի ամենեքեան
յադամայ և 'ի նոյն յառաջնմանէ.

Հարց. Զի՞նչ են բնական օրէնք.

Պատ. Գիտութիւն և խղճմտանք.

Հարց. Բնական օրէնքն զի՞նչ ուսուցա-
նեն մեզ նկատմամբ Այ.

Պատ. Զի բաց 'ի նմանէ՝ ո՛չ զոք համա-
րեսցուք մեզ Ած, և օրինաց նր
կատարելապէ՛ս հնազանդեսցուք.

Հարց. 'Ի կողմանէ մարդկան ո՞րպէս.

Պատ. Չառնել այլոց զայն ինչ՝ զոր ո՛չ
կամիմք՝ թէ արասցեն մեզ.

Հարց. Իսկ 'ի մերս կողմանէ ո՞րպէս.

Պատ. Չափաւորել զիղձս և զկամս.

Հարց. Ընդ և տոհմնոյի պահեսցի՞ն առ
դեօք զօրէնս զայս

Պատ. Ո՛չ. այլ՝ աւաղե՛լ եւս ամբարշ-
տեցան.

Հարց. Ի՞բ մեղան նոքա ընդ դէմ Այ.

Պատ. Փոխանակ ածպաշտութեան ընդ մեծի
մասին երկրպագէին արեգական ու
լուսնի, և այլ արարածոց.

Մի

Հարց. Մեղ է և զայլս անօրէնութեան գործել՞ն.

Պատ. Զծնօղսն անարգելն, սպանա-նելն, կողոպտելն, և զմիմեանս զրպարտելն, պատուիրան ոչ պահպանելն, և ըստ ամի հեռանելն չար ընկերից, և անզուսպ կերից իւրենց

# ԳԼ. Ե.

## Յաղագս Աբրահամու և այլ Նախահարց.

Հարց. Յետ ջրհեղեղին ո՞ւր պահ-պանեցաւ օրէնքն բնական.

Պատ. Ի մէջ ցեղին Սեմայ.

Հարց. Ընդ ո՞ւմ ուխտեաց Ած.

Պատ. Ընդ Աբրահամու.

Հարց. Զի՞նչ խոստացաւ նմա.

Պատ. Առնել զնա ազգ մեծ.

Հարց. Զի՞նչ ևս.

Պատ. Տալ զերկիրն Քանանու.

Հարց. Զի՞նչ խոստացաւ նմա Ած ա-ռաւել ևս հարկաւորագոյն.

Պատ. Այս անուան նր օրհնել զամ ժո-ղովուրդս երկրի.

Զի՞նչ

Հարց. Զի՞նչ նշանակէ այդ.

Պատ. Վասնզի փրկիչն աշխարհի՝ ՚ի զաւակէ նորին էր ծնանելոց. որ և եղեւն իսկ.

Հարց. Զի՞նչ էր նշան խոստմանն այն ընդ Աբրահամու.

Պատ. Թլփատութիւնն.

Հարց. Ո՞վ էր որդին Աբրահամու.

Պատ. Իսահակ.

Հարց. Ա՞յն էր կամեցեալ հայրն Աբրահամ պատարագ մատուցանել զԻսահակ որդի իւր.

Պատ. Զի ցուցցէ այնու զհնազանդութիւնն իւր՝ Աստուծոյ.

Հարց. Ընդէ՞ր հրամայեաց զայն նմա Ած.

Պատ. Այդ զի Աբրահամու գործով իսկ ցուցցէ զհնազանդութիւն հաւատոյն և սիրոյն՝ որ առ Ած, ՚ի յիշատակ մշտնջենակի, և յօրէնակ կատարեալ հնազանդութեան առ մարդկան՝ օրինաց և պատուիրանաց Այ.

Հարց. Ո՞վ էր որդին Իսահակայ.

Պատ. Յակոբ. որ և Իսրայէլ. որոյ ժբ որդիք նահապետք կոչին.

# ԳԼ. Զ.

Յաղագս գործոց Եգիպտացւոց և դատաստանին.

Հարց. Ո՞վ էր գերեցեալն Յովսէփ.

Պատ. Մին յերկոտասան որդւոյն Յակոբայ նահապետին.

Հարց. Ասա՛ պատմութիւն նորա.

Պատ. Նախանձեալ եղբարց է վսն նը-շանս յառաջադիմութեան նր՝ վաճառեցին զնա. իսկ յովսէփ յետ երկար ժամոյ յեգիպտոս իբրև զծառայ՝ մեծամեծ փառս ընկալաւ ՚ի փարաւոնէ.

Հարց. Զի՞նչ չարիս հասոյց եղբարց իւրոց փոխարէն չարութեան նոցա.

Պատ. Ո՛չ ինչ. այլ մանաւանդ ներեալ նոցա՝ ընակեցոյց զնոսա յեգիպտոս հանդերձ բոլոր ընտանեօք.

Հարց. Զի՞նչ անցք անցին ընդ որդիսն իսրայէլի անդ յեգիպտոս.

Պատ. Զկնի յոյժ բազմանալոյ նց՝ եկն այլ թագաւոր՝ (որ ո՛չ ճանաչէր զյովսէփ՛) ջանայր ապօել

զամենեսին։

Հարց։ Ո՞վ պահեաց զնոսա 'ի նմանէ։

Պատ. Ած. մեծամեծ սքանչելեօք՝ զորս արար 'ի ձեռն Մովսէսի հաւատարիմ ծառային իւրոյ։

Հարց։ Զի՞նչ էր պասեքն։

Պատ. Պասեքն էր գառն՝ սահմանեալ յողջակէզ. զոր և կերին իսրայէլացիք՝ փոքր ինչ յառաջ քան զազատութին իւրեանց յեգիպտոսէ։

Հարց։ Զի՞նչ նշանակէր ազատելն իսրայէլացւոց։

Պատ. Քանզի Ածն ամենողորմ՝ ըստ իւր խոստմանն փրկելոց էր զմարդ 'ի մեղաց և 'ի սատանայէ։

9633-57

## Գլ. Է.

### Յաղագս ճանապարհորդութեան նոցա.

Հարց։ Ո՞ւր գնացին իսրայէլացիք յետ ելից իւրեանց յեգիպտոսէ։

Պրն. Յերկիրն քանանացւոց՝ ըստ առաջ-
նորդելոյն այ։

Ծռյ. Ընդէ՞ր եկած գնաս անդ։

Պրն. Զի կատարեսցէ զխոստումն իւր։

Ծռյ. Ո՞չ անցին նքա ընդ ծովն կարմիր։

Պրն. Յարոյց ած զհողմ մեծ, յորմէ և պատառեալ ծովուն՝ բացաւ յա-
տակն։ և նքա անցին անվնաս։

Ծռյ. Յետոյ ընդ ո՞ր ճանապարհ գնացին։

Պրն. Ընդ անհետ և մեծ անապատն։

Ծռյ. Զի՞նչ ուտէին նքա անդ։

Պրն. Զմանանայն իջեալ ՚ի վերուստ վնց՝ ըստ ակնարկութեն այ։

Ծռյ. Մի՞թէ յանապատի անդ միշտ գը-
տանէ՞ին զջուր։

Պրն. Ած բղխեցուցանէր ՚ի վիմաց։

Ծռյ. Ե՞րբ ետ նց ած զօրէնս իւր։

Պրն. Յետ յիսուն աւուրց ելից նցյ յե-
գիպտոսէ անտի։

Ծռյ. Յո՞րում տեղւոջ։

Պրն. ՚Ի լերինն Սինայ։

Ծռյ. Ո՞չ երևեցաւ լեառն այն։

Պրն. Հրով, որոտմամբ և կայծակամբք
կործանեալ։

Հարց. Ե՞թէ դիտես զպատուիրանն այ՝ կորս ես նոյ, ասա՛ զի լուիցուք.

Պատ. Նախ՝ ե՛ս եմ տէր ած քո. և մի՛ եղիցին քեզ այլ ած բաց յինէն. և մի՛ դիցես զանուն աստու-ծոյ քո 'ի վերայ սնոտեաց.
Երկ՝ մի՛ արասցես քեզ զկուռս զամ՛ նմանութեան. մի՛ յերկինս 'ի վեր, և մի՛ յերկիր 'ի խոնարհ.
Երրդ՝ յիշեա՛ զի սրբեսցես զօր շաբաթուն, որ մեզ կիրակի,
Չորդ՝ պատուեա՛ զհայր քո, և զմայր քո. Հինգերորդ՝ մի՛ սպանա-ներ. Վեցերորդ՝ մի՛ շնար. Եօթներորդ՝ մի՛ գողանար. Ութերորդ՝ մի՛ սուտ վկայեր զընկերէ քումմէ.
Իններորդ՝ մի՛ երդնուցուս սուտ յանուն տն այ քո. Տասներորդ՝ մի՛ ցանկանար կնոջ ընկերի քո. և մի՛ տան նր, և մի՛ ընչից նր, և մի՛ ամ՛ իրաց՝ որք նր իցեն.

Հարց. Մի՞թէ չէին գրեալ տասն պատ-գամքս այսոքիկ.

Պատ. 'Ի վր երկուց քարեայ տախտա-

կաց

կայ կծագրել էին յայս ·

Հայր։ Յառաջնմէ հիմո՞ւտ էին պատգա-մաց այսորէն՝

Պօղ։ Այո՛ · քանզի տասնաբնեայ պատ-կամքս 'ի բնական օրինաց անմե՛-ն յառաջ եկեալ ·

# Գ Լ․ Ը․

Յաղագս խոստմանցն ու ուխտադրութեանցն ։

Հայր։ Ո՞րպիսի կերպիւ մատուցանէին զպատարագս 'ի հնումն ·

Պօղ։ Զենուին զանասունս, և խորո-վէին 'ի վը սեղանոյն ·

Հայր։ Ո՞ւր էր սեղանն ·

Պօղ։ Առաջի վկայութեան խորանին ·

Հայր։ Զի՞նչ պահէին 'ի նմա ·

Պօղ։ Երկոցն կտակարանաց, որ էր պա-տել 'ի ներքուստ և յարտաքուստ ոսկւով ·

Հայր։ Յարկեղանոջ զի՞նչ պահէին ·

Պօղ։ Զերկուս տախտակս օրինացն ։

Ո՞յք

Հարց. Ո՞յք էին քահանայքն.

Պատ. Ահարօն և որդիք նորա.

Հարց. Ո՞յք էին ղևտացիք.

Պատ. Ազնուականք որք 'ի ցեղէն Ղևեայ. որք և կարգեցեալ էին պաշտօնա-
կատար խորանին վկայութեան.

Հարց. Որպիսի խոստումն արար Աստ. իս-
րայէլացւոց.

Պատ. Զնոյնս՝ որ էր Աբրահամու.

Հարց. Զի՞նչ խոստացաւ նոցա Աստ.

Պատ. Խոստացաւ նմա առնել զնա իւր
ժողովուրդ, բնակեցուցանել յերկ-
իրն քանանու, և տալ նմա զառա-
տութիւն բարութեանց.

Հարց. Ժողովուրդքն զի՞նչ տրիտուր ա-
ռաջադրել խոստմանցն Այ.

Պատ. Սիրել զնա յամենայն սրտէ իւրեանց.
և պահել զօրէնս նորա.

Հարց. Ուխտ դաշին պահեցա՞ւ իսկապէս.

Պատ. 'Ի կողմանէ Այ՝ իսկապէս.

Հարց. Որպիսի սքանչելիս արար Աստ.
որ զի հասուսցէ զնոսա յերկիրն
քանանու.

Պատ. Ցամաքեցոյց զգետն Յորդանան,

յոր

յորժամ հա՛րկ եղև նմա անցանել:

Հարց. Ժողովուրդքն պահեցի՞ն արդեօք զպատուիրանս նոր՝ զոր եդեալ դաշինն.

Պատ. Կարի՛ փոքու.

Հարց. Քանի՞ցս դառնացուցին զՏր յանապատին անդ պատուիրանազանցութեամբ իւրեանց.

Պատ. Աւելի քան զտասն անգամ:

Հարց. Զի՞նչ արարին նոքա յետ բնակելոյն ՚ի խոստացեալ երկրին.

Պատ. Նոքա յաճախակի կռոց երկրպագէին իբրև աստուծոյ.

Հարց. Որպիսի պատժոյ ենթարկեցան նոքա յղգս պաշտելոյ նց զկուռս.

Պատ. ՚Ի ներքոյ հալածանաց, և ամենայն թշուառականութեանց.

## Գլ. Թ.

### Յաղագս հրեշտակաց.

Հարց. Էի՞ն յայնմ ժամանակի երկրպագուք կռոց և յայլոց ազգաց.

Պատ. Բազումք էին՝ որք ըստ հաճութեան խորհեցան և արարին զայնս.

Հարց. Ո՞րպիսի կերպարանօք էին կուռքն այնոքիկ.

Պատ. Կերպարանօք առն, կնոջ և այլ այլ կենդանեաց՝ զորս նոքա անուանէին ածս և ածուհիս.

Հարց. Զիա՞րդ պատուէին զնոսա.

Պատ. Մատուցանէին նոցա զողջակէզս և աղաչէին զնոսա.

Հարց. Ուստի՞ ծնաւ այնպիսի կուրութիւն.

Պատ. Յայնմանէ՝ զի մոռացան զած զարարիչն երկնի և երկրի.

Հարց. Նոքա ո՞չ մոռացան զնա.

Պատ. Ընկղմելով նոցա 'ի մէջ անօրէնութեանց և մոլեգնութեանց՝ ախ-

տա

տացան. խաչ յետոյ զարհուրէին զմտաւ ածել զճշմարտէն այ. և սա-տանայն յայն ժամ տեղի կալեալ որսայեալ զնոսա առ այն։

Հարց. Զի՞նչ յառաջացաւ ՚ի կռապաշ-տութենէ անտի։

Պատ. Նոյն՝ որ էած զնոսա յամենայն ան-օրէնութիւնս։

Հարց. Նոյլով կերպիւ զի՞նչ անուանէին կռապաշտքն այնոքիկ։

Պատ. Նոքա հեթանոսս կոչէին։

## ԳԼ. Ժ.

### Յաղագս Գալստեան Ժամանակին՝ ՔՐԻ.

Հարց. Ո՞րպիսի կառավարութիւնս ու-նէին իսրայէլացիքն ՚ի շրջելն իւ-րեանց յերկիրն աւետեաց։

Պատ. Նախ՝ զդատաւորս, և ապա զթա-գաւորս։

Հարց. Ո՞վ էր առաջին Թագաւորն նց.

Պատ. Սաւուղն ապերախտ.

Հարց. Ո՞վ էր երկրորդ Թագաւոր նց.

Պատ. Մեծահամբար մարգարէն Դաւիթ.

Հարց. Յորմէ՞ ցեղէ էր նա.

Պատ. ՚Ի ցեղէն յուդայի յակոբեան.

Հարց. Ո՞ւր արդեօք բնակէր նա.

Պատ. Յերուսաղէմ ՚ի լերինն սիօն.

Հարց. Զտապանակ ուխտին ո՞ւր հրամայեաց բերել Դաւիթ արքայն.

Պատ. Անդ ՚ի լեառն սիօն։

Հարց. Զի՞նչ խոստացաւ ած Դաւթի.

Պատ. Խոստացաւ նմա ած՝ թէ յազգէ քումմէ Թագաւորեսցեն միշտ ՚ի վերայ ժողովրդեան իմոյ.

Հարց. Այլեւս զի՞նչ խոստումն.

Պատ. Զի ՚ի նմանէ ծնանելոց էր Քս.

Հարց. Զի՞նչ նշանակէ բառս (Քն).

Պատ. Օծեալ ստուգաբանի.

# ԴԱՍ. ԺԲ.

## Յաղագս ճանաչման սամարացւոց.

Հարց. Ո՞վ էր ժառանգն Դաւթի։
Պատ. Սողոմոն որդի նորա։
Հարց. Ո՞րպէս կառավարեաց զժողովուրդ իւր։
Պատ. Հանդարտօրէ՛ն և խաղաղութեամբ։
Հարց. Ունէ՞ր զգովելի ինչ ևս։
Պատ. Այո՛. ունէր զանենչայլին ամենե-ցուն զմեծամեծն իմաստութիւն։
Հարց. Զի՞նչ մեծագործութի՛ւն արար։
Պատ. Շինեաց զտաճարն Երուսաղէմի։
Հարց. Միւս ևս տաճար կա՞յր արդեօք անդ՝ տեղի երկրպագութեան Աստուծոյ։
Պատ. Ո՛չ. մի միայն էր տաճար, և մի սեղան ՚ի նմին տաճարի. որպէս զի ցուցցէ այնու՝ թէ մի միայն է Աստուած և մի հաւատ։
Հարց. Պահեա՞ց արդեօք Սողոմոն մին-չև ցօր մահուն զիմաստութիւն իւր։
Պատ. Մ՛եկաւ իգամոլութեն խաւարեալ լուսոյ մտաց նր՝ զրկեցաւ յԱստուծոյ պարգև իմաստութեան անտի իւրմէ։

Զի՞նչ

Հարց. Զի՞նչ եղեւ զկնի մահուանն նր.

Պատ. Բաժանեցաւ թագաւորութին նր.

Հարց. Զի՞նչ մնաց որդւոյ նր.

Պատ. Յերկոտասան ցեղիցն անտի միայն երկու ցեղք՝ յուդայի և բենիամենի.

Հարց. Ո՞ թագաւորեաց ՚ի վր մնացելոց տասն ցեղիցն.

Պատ. Յերոբովամ ծառայ սողոմոնի.

Հարց. Զի՞նչ արար նա առ հաստատութիւն աթոռոյ թագաւորութեն իւր.

Պատ. Նա արար զհերձուածս.

Հարց. Զի՞նչ է բառդ այդ (հերձուած).

Պատ. Եկեղեցւոյ բաժանումն.

Հարց. Ճշմարիտ եկեղեցին ո՞ւր եկաց.

Պատ. Յերուսաղէմ քաղաքի.

Հարց. Ո՞ր քաղաքն էր աթոռանիստ թագաւորութեն իսրայէլացւոց, և սուտ եկեղեցին.

Պատ. Սամարիայ.

# ԳԼ. ԺԲ.

## Յաղագս Մարգարէից.

Հարց. Մարգարէք ո՞րպիսի արք էին.

Պատ. Լի հոգւովն աստուծոյ.

Հարց. Ո՞վ է հոգին աստուծոյ.

Պատ. Հոգին Եր. անձ՝ որ զամ՚ արարածս յոչընչէ գոյացոյց.

Հարց. Ընդէ՞ր (մարգարէ) անուանեալք զնս.

Պատ. Քանզի զգալոյն պատմէին.

Հարց. Ո՞րք բազմացան մարգարէք.

Պատ. Զինի բաժանման թագաւորութեանն իսրայէլացւոյ.

Հարց. Որո՞ց մարգարէից գրեալքն ունիմք.

Պատ. Եսայեայ, երեմեայ, եւ. որք են թուով վեշտասան.

Հարց. Զի՞նչ գուշակէին մարգարէքն.

Պատ. Զսամարացւոց թագաւորութեն զանհրկելոյ կործանումն.

Հարց. Զի՞նչ գուշակէին զերուսղէմէ.

Պատ. Զաւերումն եւ դրձլ զկ՚նգնումն.

Հարց. Եւ զմեսիայէ գուշակեցի՞ն ինչ.

Այո.

Պատ. Այո՛. կանխաբանեցին նոքա զա
մենայն տնօրէնութեանց նորա.

Հարց. Պատմեցի՞ն ինչ և զնոր կտակա-
րանէն.

Պատ. Այո՛. նոքա մարգարէքն լիով պատմե
ցին՝ թէ նորն կատարելագո՛յն է
լինելոց քան զհինն.

Հարց. Արդեօք զհեթանոսաց զինչ գու-
շակէին նոյն մարգարէքն.

Պատ. Յայտնապէս աւետէին՝ թէ ամե-
նայն ժողովուրդ հերքեն զկուռս
երկիրպագցեն ճշմարտին նմա.

## ԳԼ. ԺԳ.

### Յաղագս գերութեան Բաբելացւոց.

Հարց. Փութացա՞ւ ած պատժել զիս-
րայէլացիս վն մեղաց իւրեանց.

Պատ. Երկայնամիտ լինէր առ նմ ժա-
մանակս բազումս. զի գուցէ՞ թէ
զղջասցեն՝ դարձցին առ նա ինքն.

Հարց. Թագաւորութիւնն սամարացւոց
մնա՞ց

մա՞ց՝ թէ կործանեցաւ.

Պաւղ. Մեծ աւերումն. իսկ տառապանաց ցեղին եղև ցրուիլ՝ ի զանազան կողմունս երկրի.

Ճորջ. Ո՞վ աւերեաց զերուսաղէմ։

Պաւղ. Նաբուգոդոնոսոր արքայն բաբելացւոց.

Ճորջ. Զի՞նչ արար հրէից ժողովրդեան.

Պաւղ. Տարաւ զնոսա գերի.

Ճորջ. Ո՞ւր եկաց ճշմարիտ քրիստոնէութիւն.

Պաւղ. Ասիայն հրէայք պահեցին զայն.

Ճորջ. Զի՞նչ կրօն ունէր ՚ի բաբելոն.

Պաւղ. Կռապաշտութիւն և աւելորդապաշտութիւն.

Ճորջ. Դանիէլ ո՞վ և ո՞րպիսի ոք էր.

Պաւղ. Էր այր սրբակեաց և մարգարէ.

Ճորջ. Երեք ընկերք նորա զի՞նչ արարին.

Պաւղ. Պատկերի բաբելացւոց արքային ո՛չ մատուցին երկրպագութիւն.

Ճորջ. Թագաւորն զի՞նչ արար նոցա վասն ո՛չ երկիրպագանելոյ նոցա.

Պաւղ. Հրամայեաց արկանել զնոսա ՚ի մէջ հնոցի հրոյն բորբոքելոյ.

Ճորջ. Զի՞ եղև արկելոյն ՚ի հուր.

Պաւղ. Ո՛չ. անկէ՛ զպահեց զնոսա անընչեղեալս.

Գ. Ն.

## ԳԼ. ԺԴ.

### Յաղագս ազատութենէն իսրայէլացւոց.

Հարց. Որո՞յ ձեռամբ ազատեաց Աստուած զիսրայէլացիս ՚ի գերութենէն բաբելացւոց.

Պատ. ՚Ի ձեռն կիւրոս արքային պարսից

Հարց. Նա ի՞նչ վախճան եղև այդ խառնակութեան հրէից ընդ այլազգեաւն.

Պատ. Նա այս՝ զի անհաւատք ծանիցեն զճշմարիտն Աստուած.

Հարց. Ընկա՞ն արդեօք հրէայք վերստին ՚ի կռապաշտութիւն.

Պատ. Այլեւս ո՛չ անկան.

Հարց. Ո՞վ յառաջնոց հալածեաց զնոսա վասն աստուածպաշտութեան.

Պատ. Անտիոքոս Թագաւորն ասորւոց՝ որ էր ազգաւ յոյն.

Հարց. Ո՞վ եկաց ընդդէմ անտիոքոսի.

Պատ. Յուդայ մակաբէ, և եղբայրն իւր.

Հարց. Զի՞նչ արարին մակաբեանքդ.

Դար

Պաշ. Դարձուցին զժողովուրդն առ
ապաշխարութեն։

Ճորջ. Ընդ աւուրսն է այնոսիկ ո՞վ կա
ռավարէր զՀնէայս.

Փաշ. Մերոյեշէնլ տոհմն մակարէր.

Ճորջ. Ո՞վ սպանեալ զմակարայեցիս.

Պաշ. Սպարէշ նշ եղեն հռովմայեցիք.

Ճորջ. ՚Ի Ժմնկս ծննդեան Քնի ո՞վ էր
թագաւոր Հրէից.

Պաշ. Հերովդէս.

Ճորջ. Համայն՞յս սպասէին Հրէայք զգա
լստեն Քնի՝ թէ այլ և այլ յուսով։

Պաշ. Ամենք սպասէին՝ թէ Քնեկեն
թագաւորեսցէ ՚ի վր երկրի որպ այլ
թագաւորք. և զինչ ազգս նուա-
ճեսցէ է բռամբ Հրէից. և ին-
քեանք կեցցեն ամ՛ բարութեամբ, պատ
ուով և ուրախութե. Այք կոչէին
մարգարէքն. Իսկ այլք ծառայէ
լին ոչ ճշմարտի, հաւատով և սի
րով յուսացեալ հաւատային՝ թէ
Քն ո՞չ առ զերկրաւոր թագաւո-
րութիւն հաստատել՝ գայ, այլ՝
զերկնայինն. Նուցուցէ նշ զմա

նապարհն ճշմարտութեան՝ առ 'ի փրկութեան. յարուսցէ 'ի մեռելոց, և տարցէ 'ի կեանս յաւիտենից. և ըստ այսմ՝ կոչեցանք հոգևորք.

## ԳԼ. ԺԵ.

### Յաղագս ծննդեանն Քսի.

Հարց. Ո՞վ էր մայր տն մերոյ յսի քսի.

Պատ. Սրբուհի կոյսն մարիամ։

Հարց. Յորո՞ւմ ցեղէ էր կոյս մարիամն.

Պատ. Էր 'ի ցեղէն յուդայի.

Հարց. Յորո՞ւմ տոհմէ էր.

Պատ. 'Ի տոհմէն դաւթի.

Հարց. Ընդ ո՞ւմ խօսեցեալ էր արդեօք.

Պատ. Ընդ սրբոյն յովսեփայ՝ որ էր 'ի նոյն տոհմէ. առ 'ի պահպանակ լինել կուսութեան նր.

Հարց. Ո՞վ յայտնեաց նմա՝ թէ 'ի քէն ծնցի փրկութիւն տիեզերաց՝ քս.

Պատ. Հրեշտակապետն գաբրիէլ առա-

քեզ. 'ի հօրէ աւետեաց նմա զայս խորհուրդ սքանչելի:

Հայր. Մարդկանն կայ ո՞վ հաւանեցաւ.

Որդի. 'Ի պատասխանւոյ հրեշտակա-պետին թէ (հոգին որ եկեսցէ 'ի քեզ) հաւատաց՝ թէ մինչ կոյս էր Մարիամ:

Հայր. Ո՞վ յայտնեաց զհաւանումն իւր.

Որդի. Նոյն բանիւ (ահաւասիկ կամ աղախին տեառն՝ եղիցի ինձ ըստ բա-նի քում.)

Հայր. Նոյն զի՞նչ հետեւեցաւ.

Որդի. Հրեշտակապետն գնաց 'ի նմանէ. և բանն հօր՝ որ է որդին միածին առ իսկզբն իջեւ 'ի ծոցոյ հօրն իւր 'ի նոր արգանդն՝ էառ 'ի նմանէ կուսական զմարդկութիւն, առն եղեւ մարդ՝ ոգի և մարմին՝ բայց 'ի մեղ-ստամբութենէ. ոչ՝ էառ միայն զբանա-կան հոգի՝ պէտ բաղզանց միայն, և զանապական մարմին:

Հայր. Օ՞ր յաւելեր զամենակալն գե-րազանց և անապական 'ի միտս և 'ի մարմին նոր:

Պրոֆ. Մի՛ զի միտք մը ըղձ անգամ և առ բնական առարկայս իսկ ակարանայ հասանել. այլ՝ միտք նորա առ ամ՛ գերբնականս հասանել՝ գերազանցէր զամենեքումբք. և զի ամի զմիտս իսկ անցանէր.

Իսկ պանապականութիւն մարմնոյն զէնմին և զարեանն ամ՛ եկեղեցւոց ու ղղափառաց ընդունին. վա կի ող սկզբնաւորութիւն մարմնանալոյն յանապականութիւն, նոյն ծզս և մարմինն էր անապական. զի որում և ո՛չ իսկ եաեւ զապականութիւն.

Ճորջ. Ո՞ւր ծնաւ Տէրն մեր յիսուս.

Պրոֆ. Ի բեթղէհէմ հրէաստանի.

Ճորջ. Զի՞նչ նշանակէ բառս այս (յս)

Պրոֆ. Նշանակէ փրկիչ.

Ճորջ. Ո՞րպիսի հեթանոսք էին՝ որք յառաջ քան զամ երկիրպագին նմա.

Պրոֆ. Մոգք եկեալք յարևելից.

Ճորջ. Զի՞նչ արիր հերօդէս յայնժամ.

Պրոֆ. Լուեալ ի մոգուցն՝ թէ (ծնաւ.) և քննեալ զմարգարէութիւնս հա

ւաս

ւաստի եղև թէ յայնմ իսկ միջո
ցի (ծննցի Մեսիային.) և ոչ կարծէր՝
թէ նա լինելոց է թագաւոր երկրի,
մանաւանդ զի ինքն հռչակեալ էր
զինքեան թէ իցէ Մեսիայն, երկն
չէր թէ մի՛ գուցէ յայտնեսցի խա
բեբայութիւն իւր. միանգամայն և
զրկեսցի ՚ի թագաւորութենէ զօրու
թեամբ ամենայաղթ Մեսիային.
վսյ՝ հրամայեաց կոտորել զամե-
նայն մանկունս՝ որք էին ՚ի Բեթ
ղէհէմ, և յամ սահմանս նորա՝
յերկեմենից և ՚ի խոնարհ. ոչ զի
և զնա ը̃ նմ̃ մեռուսցէ:

Հարց. Ո՞չ զերծաւ Յիսուս.

Պատ. Հրեշտակն հրամայեաց յովսե-
փայ փախուցանել զմանուկն յե
գիպտոս. Իսկ յորժամ հերով-
դէս մեռաւ, կրկին հրամայեաց
նա դառնալ ՚ի հրէաստան. և յով-
սեփայ հնազանդեալ գնաց ը̃ հը-
րամանի նն՝ ՚ի քաղաքն գալիլե-
այւոց՝ նազարէթ անուն.

# ԳԼ. ԺԶ.

## Յաղագս Յովհաննու Մկրտչին.

Հարց. Ո՞յր որդի էր նա Յովհաննէս։
Պատ. Զաքարիայի և եղիսաբեթի՝ որ էր մօրաքոյր սբ̃ կոյս Ածածնին։
Հարց. Ո՞ւր արդեօք բնակէր նա։
Պատ. Յանապատի. ուր կեայր ժուժ-կալութբ̃ մեծաւ։
Հարց. Խօսեցա՞ն մի՞թէ մարգարէք վ̃ն նր̃.
Պատ. Նախապատմեցին՝ թէ է կարապետ Մեսիայի, ք̃ Քրիստոսի.
Հարց. Զի՞նչ է կարապետ ասել.
Պատ. Նա՝ որ յառաջընթաց լինի մեծի ումեք, կմ̃ թգ̃ւորի։
Հարց. Զի՞նչ քարոզէր կրպտն̃ քն̃ի։
Պատ. Խրախուսէր զմ̃դիք յապաշխարութի̃ն
Հարց. Զի՞նչ արար ը̃ նմ̃՝ զորս Տր̃ձյց.
Պատ. Մկրտեաց զնա ՚ի Յորդանան.
Հարց. Զյիսուս ևս մկրտեա՞ց.
Պատ. Այո́. Յն̃ կամեցաւ մկրտիլ՝ առ ՚ի սրբել զջուրն մկրտութե̃ն.

Զի՞նչ

Հարց. Զի՞նչ պատահեցաւ ՚ի ժամու մկրտութեան յիսուսի.

Պատ. Պատառեցան երկինք. Հոգին սուրբ էջ ՚ի վերայ նորա ըցյայս. եւ լսելի եղեւ ձայն հայրական՝ թէ դա է որդի իմ սիրելի՝ ընդ որում ես հաճեցայ. դմա լուարուք.

Հարց. Զի՞նչ վկայեաց սուրբն յովհաննէս վասն յիսուսի քրիստոսի.

Պատ. Վկայեաց՝ թէ եկն փրկել զաշխարհ ՚ի մեղաց, եւ ՚ի դատապարտութենէ նորին.

## ԳԼ. ԺԸ.

### Յաղագս կոչման Առաքելոց.

Հարց. Ո՞ւր գնաց Յիսուս մկրտութենէն.
Պատ. ՚Ի յանապատ.
Հարց. Զի՞նչ արար նա անդ.
Պատ. Պահեաց զաւուրս քառասուն.
Հարց. Ո՞պ կոչեաց զաշակերտս իւր.
Պատ. Հրամայէր նոցա՝ թէ եկա՛յք զկնի իմ

լմ. և նա վաղվաղակի թողեալ
զամ՟ չոգան զհետ նր.

Հարց. Զի՞նչ են (աշակերտքն.)

Պատ. Մարդիկ՝ որք ունկնդիր լինէին
ուսուցչի իւրեանց, և հետևէին
վարդապետութեան նր.

Հարց. Զի՞նչ նշանակէ բառդ (առաքեալ)

Պատ. Դեսպան, կամ էլչի.

Հարց. Քանի՞ առաքեալս ընտրեաց մեր
իւր ՚Քն տէրն մեր.

Պատ. Երկոտասան. որոց անուանքն
են այսոքիկ. Պետրոս, և եղ-
բայր նր՝ Անդրէաս. Յակով-
բոս և Յովհաննէս՝ որդիքն զե-
բեդեայ. Փիլիպպոս. Բար-
թուղիմէոս. Մատթէոս. Թով-
մաս. Յակովբ և Յուդայ կամ
Թադէոս՝ որդիքն ալփեայ. Սի-
մոն. և մատնիչն ՚Քսի՝ յուդայ
իսկարիովտացի. որոյ դատապար-
տեալ և կորուսեալ՝ վիճակաւ ընտ-
րեցաւ ՚ի տեղի նր Մատաթիաս.
որով և թիւ վերոյիշեալ ժբ նը
Առաքելոյն լրացաւ.

# ԳԼ. ԺԸ.

## Յաղագս քարոզութեան Քրիստոսի.

Աշկ. Զի՞նչ առնէր Յիսուս։

Վրդ. Ի քաղաքս, ի գիւղս և յայլ տեղիս բազում քարոզէր։

Աշկ. Զի՞նչ արդեօք քարոզէր։

Վրդ. Զաւետիսն արքայութեան երկնից։

Աշկ. Զի՞նչ նշանակէ բառդ (աւետիս.)

Վրդ. Լուր ախորժելի։

Աշկ. Զի՞նչ է արքայութիւն երկնից։

Վրդ. Փառք և այն մեծ բարեբախտութիւն, և յաւիտենական կեանք Աստուծոյ և Քրիստոսի։

Աշկ. Զի՞նչ ասէր Յիսուս զինքենէ։

Վրդ. Ելի ի Հօրէ, և եկի յաշխարհ. (Ի ծոց Հօր ելի.) զի բանիւ թողութեան զմեղս, և երթամ առ Հայր։

Աշկ. Ի փրկութիւն մեր՝ զի՞նչ առնել արդեօք հրամայէր մեզ։

Վրդ. Հաւատալ յինքն, հնազանդել վարդապետութեան նորա, և ապաշխարել։

Աշկ. Ո՞ւ է ապաշխարել։

Վրդ. Որ ընդունելոյ զթողութիւն մեղաց։

Աշկ. Որո՞վ հաստատէր՝ թէ ինքն է իս

կամքին որդի իմ.

Պատ. Բազմազանի սքանչելեօք.

Հարց. Զի՞նչ սքանչելիս գործեց.

Պատ. Փարատեց զցաւս, հալածեց ըզ-դեւս, և յարոյց զմեռեալս.

Հարց. Զի՞նչ օրինակս եցոյց մեզ.

Պատ. Զամ՚ առաքինութիւն. մանաւանդ ըզ-խոնարհութիւն, զհեզութիւն, զգթա-ծութիւն, զողորմածութիւն, և զնա-խանձ վն ճշմարտութեան.

Հարց. Զի՞նչ էր վախճան գործոց նորա.

Պատ. Փառք հօր իմ և լրումն կամաց նորա.

Հարց. Զո՞րպիսի աղօթս ուսոյց մեզ.

Պատ. Հա՛յր մեր՝ որ յերկինս ես. սբ եղիցի անուն քո. եկեսցէ արքայ-ութիւն քո. եղիցին կամք քո, որպէս յերկինս՝ և յերկրի. Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր. և թո՛ղ մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պրտպնց. և մի՛ տանիր զմեզ 'ի փորձութիւն. այլ՝ փրկեա զմեզ 'ի չարէ.

Հարց. Արդ եօք բոլորեքին գնայի՞ն ըզ-հետ նորա. կամ լսէի՞ն քարոզութեան.

Վար. Ժողովուրդք ամ ուսանելոյ փու-
թային գունդ գունդ դիմէին
լսել զքարոզութիւն նր. սակայն
մեղաւորք ոչ անսային կեն-
սաւորիչ խրատուցն նր, չկամե-
լով հրաժարել յանօրէնութենէ.
վնզ քարոզութիւն նր խայթէր զըղ-
խղճմտանս նց. ուստի և ծնաւ
'ի նց նախանձ ընդ դէմ նր.

Աշկրտ. Ո՞յք էին մեծ թշնամիքն նր.

Վար. Դպիրք և փարիսեցիք.

Աշկրտ. Դպիրքն ո՞յք էին.

Վար. Ուսուցիչք օրինաց.

Աշկրտ. Փարիսեցիքն ո՞յք էին.

Վար. Այնոքիկ՝ որք վեր քան զամե-
նայն ինչ՝ զպահպանումն օրինաց
պարտականութիւն դնէին ինքեանց.

Աշկրտ. Արտաքինաբա՞ր կենցաղավարէին.

Վար. Մանաւանդ կեղծաւո՛ր էին.

Աշկրտ. Յո՞ր վայր ազդեաց չար նախանձ
թշնամեացն Յիսուսի.

Վար. Մինչև ցսպանումն նր.

Աշկրտ. Ունէ՞ր զընտանի թշնամի.

Վար. Մի յերկոտասանն աշակերտացն
իւ

ւորոց՝ յուդայ խնկարկովտայեն
յայտնեցաւ ծայրագոյն թշնամի
նը՝ մատնելովն և վաճառելովն
զնա ընդ երեսուն արծաթոյ.

## ԳԼ. ԺԹ.

### Յաղագս չարչարանաց և մահուանն Յ͞սի

Հարց. Յորում ժամանակի մեռաւ Յ͞ս.

Պատ. ՚Ի ժամանակի զատկին՝ զոր պասեքն անուանեն.

Հարց. Զի՞նչ արար փրկիչն տեսչերաց ՚ի վերջին երեկոյին ընդ առաքելոցն իւր.

Պատ. Կամելով հաստատութիւն ցուցանել՝ թէ ո՛չ է մեկնելոց յամ՝ հաւատացելոց, աւանդեաց զինքն հաղորդութեան խորհրդոյ. Քանզի առեալ ՚ի ձեռս իւր զհացն՝ օրհնեաց և ետ նոցա ասելով. (Առէք և կերայք այս է մարմին

մին իմ։) Եւ ապա առեալ ըզ բաժակն գինեաւ՝ ասէ. (Առ-բէք ՚ի սմանէ ամենեքեան այս է արիւն իմ, որ վն՟ ձեր բազմաց հեղանի ՚ի թողութի՟ մեղաց.) Եւ ՚ի վե՟ այսր խորհրդոյ հիմնեաց զնոր ուխտ մարդկան ընդ Աստուծոյ.

Հարց. Յետ երեկոյին զի՞նչ արար Յս՟.

Պատ. Առանձնացեալ եկաց յաղօթս որպէս մարդ, և ետ զինքն ՚ի կամս և ՚ի հաճութիւնս Հօր.

Հարց. Յայնժամ յուդայ զի՞նչ արար.

Պատ. Ած զինուորս. զի կալցին ըզ Յիսուս.

Հարց. Ո՞ւր տարան զնա.

Պատ. Առ քահանայապետն կայիափայ.

Հարց. Պետրոս զի՞նչ արար.

Պատ. ՚Ի հարցանելն թէ աշակե՞րտ իցէ Քնի, ուրացաւ. բայց վաղվաղակի զղջացեալ՝ ելաց դառնապէս. որով և եգիտ զթողութի՟.

Հարց. ՚Ի կայիափայէ ո՞ւր տարին զՅս՟.

Պատ. Առ պիղատոս.

Զի՞նչ

Ծառյ. Զի՞նչ արարին նմա անդ.

Պարն. Եդին 'ի գլուխ նորա զփշեղէն պսակ.

Ծառյ. Եւ ապա զի՞նչ.

Պարն. Հանին զնա 'ի խաչ.

Ծառյ. Ո՞րպէս աւանդեաց զհոգին իւր 'ի վերայ խաչին.

Պարն. Նոյն բանիւ. (Հա՛յր՝ 'ի ձեռս քո յանձն առնեմ զհոգի իմ.) յայնժամ՝ բաժանեցաւ հոգին 'ի մարմնոյն.

Ծառյ. 'Ի ժամու մահուանն նորա զի՞նչ նշանք երևեցան.

Պարն. Արեգակն խաւարեալ 'ի միջօրէի գիշերացաւ ընդ ամենայն տեղիս, ցելաւ վարագոյր տաճարին վերուստ մինչ 'ի վայր, շարժեցաւ երկիր, պատառեցան վէմք, բացան գերեզմանք, և յարեան բազում՝ ննջեցելոց սրբոց մարմինք.

Ծառյ. Ահա նորա ո՞ր եղև պատարագ.

Պարն. Զանգի մահն ելից զաստուածային արդարութիւն վասն մեղաց ամենայն մարդկան. որով զպարտսն իսկ էին.

Ծա

## ԳԼ. Ի.

### Յաղագս յարութեան Յիսուսի.

Հարց. Յետ մահուանն յետ զի՞նչ արարին զմարմին նորա։

Պատ. Եդին ՚ի գերեզմանի.

Հարց. Թշնամիք նո՞ր զի՞նչ արարին.

Պատ. Գիտելով նոցա զմարգարէութիւն՝ թէ պարտ էր յառնել, եդին զպահապանս. զի մի՛ կատարեսցի այն ՚ի վ՟ր ն՟ր.

Հարց. Յորո՞ւմ աւուր յարեաւ Յս՟.

Պատ. Յերրորդ աւուր յետ մահուանն,

Հարց. Փութո՞վ հաւատացին առաքեալք յարութեան Յս՟ի.

Պատ. Նոքա տեսին զնա աչօք, և շօշափեցին ձեռօք։

Հարց. Յո՞րքան ժամանակս եկաց ընդ նոսա յետ յարութեան։

Պատ. ՚Ի քառասուն աւուրս։

Հարց. Զի՞նչ պատուէր տայր նոցա.

Պատ. Երթալ յա՟մ, քարոզել ամե-

նեցուն զճշմարտութիւն, և զբարեգործութիւն. դարձուցանել 'ի յանօրէն վարուց, ածել զնոսա յապաշխարութիւն, և որք անկեալ ընկալցին զքարոզութիւնն, միաւորել զնոսա մկրտու թ̃ սրբոյ եկեղեցւոյ:

Հարց: 'Ի ձեռն խորհրդոյ մկրտութեան զի՞նչ ուսոյց նա մեզ:

Պատ. Թէ Հայր և որդի և Սբ. Հոգին է մի ճշմարիտ Ա̃Ծ.

Հարց: Ո՞րպիսի իշխանութիւն ետ առաքելոց իւրոց:

Պատ. Զմեղս թողուլ:

Հարց: Նա ո՞վ եթող զնոսա:

Պատ. Համբարձաւ յերկինս ակն յանդիման ամենեցուն:

Հարց: Յայնմ օրէ և այսր, և մինչև 'ի յաւիտեան իսկ յո՞րպիսի կացութեան մնայ նա:

Պատ. Նոյնին մարմնովն 'ի վե՛ր քան զա̃մ արարածս փառաւորեալ յա̃մ արարածոց.

Հարց: Զի՞նչ խոստացաւ առաքելոց իւ-րոց

րոց ՚ի համբառնալն իւր ։

Պատ. Խոստացաւ նոցա ո՛չ մեկնել յե-
կեղեցւոյն իւր, և յետ քրիս-
տոնէից մինչ ՚ի կատարած ծի.

Հարց. Այլես գալո՞ց է յաշխարհ ։

Պատ. Արդարև գալո՛ց է ՚ի դատել
զկենդանիս և զմեռեալս յա-
ւուրն յետնում ։

## ԴԱ. ԽԸ.

### Յաղագս էջման Հոգւոյն սրբոյ յառաքեալսն ։

Հարց. Զի՞նչ էր պենտեկոստէն, կամ
յիսնեակն հրէից ։

Պատ. Էր տօն մեծ. յորում տուեալ
էր նոցա ԱԾ զօրէնսն ։

Հարց. Յայնմ աւուր զի՞նչ պատահե-
ցաւ առաքելոցն ։

Պատ. Նորա ընկալան զՀոգին Սբ. ։

Հարց. Զի՞նչ զօրութիւն առեալ ՚ի նմա ։

Պատ. Լուսաւորեաց զմիտս նոցա՝ առ
իմաստ Սբ. գրոց ։

Հարց. Զի՞նչ ես զգայլին նք.

Պատ. Սեր մծ ու Ռծ:

Հարց. Մ՛ինչ ընկալան զՀոգին սուրբ՝ զի՞նչ արարին։

Պատ. Սկսան խօսիլ զանազան լեզուս.

Հարց. Ո՞ւր ի՞նչ վախճին ուսոյց Հոգին.

Պատ. Որ ՚ի յամ՛ ազգաց քարոզել զաւետարանն փրկութեան։

Հարց. Յոհանն Պետրոս զի՞նչ արար.

Պատ. Լցեալ Հոգւով սրբով՝ սկսաւ քարոզել կարի՛ ազդեցութ, որով զբազումս էած ՚ի զղջումն և մկրտութ ստուգեաց զաւետարանակին ճշմարտութին այնքան՝ մինչ զի ՚ի նմին ժամու դարձան ՚ի ժողովրդենէ անտի արք իբր երեք հազարք.

Հարց. Միւս առաքեալքն զի՞նչ։

Պատ. Նոքա ևս ձեռայինն զօրութն ա-
արարին սքանչելիս մծամեծս. և քարոզումն նց էր Հոգւոմ-
տոյ, որով ածին զամ՛ ժողովուրդըս ՚ի հաւատս Քնի.

Հարց. Ա՞ր էր Հոգին որ յաւուր պէն

տեկոսանէի առաքելյան։

Պտս. Որպէս զի յայնմ աւուր յայտնեսցէ զնոր օրէնս, յորում ամբոխեալ էր նա և հինն.

Իրաւաբանութեան անգղիացւոց. Երգեցմունք հան-
գստեան ... Գէորգէ Երրորդին։

Խաղաղութիւն հաստատութեան կանոնք յերկրաւանց. և երջանկութիւն լուսաւորանշեալ յանձանց յապահով վայելմանէ ստացուածոց իւրեանց։ Վասն զի ընդ արձակութեան բաղձանաց սրտի քո ամփոփեալ 'ի չափաւոր սահմանի. և արդարութիւն առաջնորդեսցէ նոցա ուղղապէս։

Մի՛ չար աչօք հայեսցիս յինչս դրացւոյ, այլ՝ սեփականութիւն նորա ազատ եղիցի 'ի տէրութեան քո։ Փորձութիւն մի՛ հրապուրեսցէ. և մի՛ գրգռութիւն ինչ դրդեսցէ զքեզ 'ի ձգել զձեռն քո առ 'ի վնաս կենաց նորա։

Մի՛ զոք վատահամբաւեսցես արտաքոյ ինչ. և մի՛ սուտ վկայեսցես զնմանէ։

Մի՛ ուսուսցես զծառայ նորա՝ թէ նենգեա՛ տեառն այսու կամ այնու խարդաւանութեամբ. և թէ թող և տարցի 'ի նմանէ կեա. մանաւանդ մի՛ դրդեսցես 'ի մեղս զկին անկողնոյ նորա. զի այն լինելոց է ցաւ սրտի նորա՝ զոր ոչ կարիցես բուժել. և զվիշտս կենաց նորա՝ զոր ոչ ինչ փոխարինութեամբ

կա

կարես հաստատուցանել ըզ բոլոր կեանս քո ։

Ի գործս և 'ի կենցաղավարութիւնս քո լեր ըզ ան
նեալն անաշխատ , անկեղծ և արդար . և այսու՛ նո
ցա ամենայնիւ՝ ոչ և կամիս թէ նոքա արասցեն քեզ ։
Լեր հաւատարիմ յանձնեցելոցն քեզ . և մի՛ խաբեր
զնա՝ որ 'ի քեզ է ապաւինեալ . և առանց պղծա
լութեան գիտեա՛ զի առաջի Այ մաքրութիւն մեծա-
գոյն չար է քան զգողութիւն ։

Մ՛ի նենգեսցես զաղքատն , և մի՛ զրկեսցես զմշա-
կըն 'ի վարձուց իւրոց ։

Յորժամ վաճառեսցես 'ի շահիլ , անսա՛ զդատաս
տանի խղճմտանաց քոց . և եթէ գնօղն տհամ իցէ ,
մի՛ ապահովութեամբ վարիր ընդ նմա ։

Հատուսցես զպարտիս քո . զի որ հաւատաց բա
նից քոց , համարեցաւ զքեզ 'ի պատուէլի . ուստի
իւրացուցանելն քո արդ զինչս նորա , կամ պահե
լըդ առ քեզ ըզ երկար՝ է գործ պակաս և անիրաւ
Վերջապէս՝ ո՛վ որդի հաստատակութեան . մնա՛ 'ի
քննութեան սրտիդ . օգնական ընկե՛ր քեզ զօրա-
րինչ . և տես՝ թէ մեղուցեալ իցես ընդդէմ իրա-
ւանցս այսոցիկ , պատկառեալ ամաչեսցես , նաև
առ նորոգութիւն վարուց քոց փութա՛ ըստ կարեացդ ։
Եւ Քնի յուսոյն մերում փառք պատիւ և երկր
պագութիւն յաւիտեանս յաւիտենից . ամէն ։

# Յիշատակարան տպագրութեան Գրոցս։

Փառք, գոհութիւն եւ երկրպագութիւն Հօր՝ ծընողի, Որդւոյ՝ ծնելոյ, եւ Հոգւոյ՝ նոցուն փառակցի՝ ամենայնք Երրորդութեան եւ միասնական Աստուածութեան. որ հանապազ պատրաստ է ժամանել՝ նպաստ՝ որոց կարդան առ նա ճշմարտութեամբ։ Նոյն լինիք օգնեաց մեզ հասանել յաւարտ տպագրութեան ազգասիրական տետրակիս կոչելոյ Համառօտութիւն [illegible] Սբ. Գրոց. Որ արդարեւ կարի պիտանի եւ օգուտ ոչ միայն մերազնեայ համբակաց՝ աշակերտելոց յուսումնարանս, այլ՝ նա եւ իւրաքանչիւր չափու հասակի՝ որք միանգամ ըղձին գիտութեան լուսաւորեալս ունիցին կենցաղավարել. առ չինելոյ ափ՝ ի բերան ՚ի գիտնածըս տառապելութեց զդիպս հարկաւոր գիտելեաց ՚ի մէջ գրոց բովանդակելոց։

՚Ի սոյն յոյս ազգային հարկաւորութիւն հայեցեալ բարեպաշտ եւ ազգասէր Տոհմին Քուրտեանց՝ ոչ անխայեցին ՚ի ծախս սորին. այլ ջերմեռանդաբար արձանացան լինել օժանդակ տպագրութեան սորա. նախ՝ ՚ի յիշատակ բարեպաշտ անուան. երկրորդ՝ ՚ի պարծանս եւ յօգուտ ազգիս իւրեանց. երրորդ՝ ՚ի խրախոյս այլոց մերազնեից առ սոյնպիսի ազգասիրական գործս։ Զի լուսաւորութիւն ազգի լի. եթէ ոչ՝ աչալուրջ հետեւողութեամբ, եւ աստուածային ձեռնտուութեամբ անհատից յառաջանալ առ ՚ի հեղինակաց ՚ի հաշիւս գիտնոց դասելոց։

Վասն յարժանաւորացն աղօթս ձեր բարեհաճեսջի՛ք յիշել զարժանաւոր սերնդեան Քուրտեանց բաշխեցից զորդիս յաստուածային բնակեալս՝ զպա

բոն

րոն Յովհաննէս և զպարոն Մալխաս Սաֆարեն
ըն ։ Նոյնպէս յիշեսջիք ՚ի մաքուր աղօթս ձեր
զ՚ի Քս հանգուցեալ ծնօղս մր զհայրն՝ զպարոն
Սաֆարն. և զմայրն՝ զՄարիամն. ը̅ որս և զոր-
դի խուրեանց՝ կամ զեղբայր սոցին՝ զհանգուցեալ
պարոն Կարապետ սաֆարեանն. և զա̅մ զհէնն և
զնոր ննջեցեալսն սոցին, հայցելով միանգամայն
և վս̅ բոլոր կենդանեաց մեր արևշատութիւն յանըրս
պաս Ադեւրէն կենդանութեն ։ Եւ որք յիշէքդ
յիշեալ լինիջիք առաջի ահեղ ատենին Քրիստո
սի Աստուծոյ մերոյ. ամէն ։



Յանկուցե՛ է մեզ ոտմէք երջանկութեն կենցաղոյս.
և այն որ 'ի ստացւելոց միջոցի, այլ՝ մերձ և հանդա-
րտալ. յայն ասես ոմանք հոգւոյն զանհանգն գան-
ձոց. ոմանք ընդրեն 'ի Էարձանս փառաց և պա-
տուոյ ամէպանաց. և Էաղմութեն ծանօթեց չափն
զայն 'ի յետս եթերել: Ասկայն այս մեզ հայց յան-
ցաւոր կենցաղոյս Էարութեն.
Եւ յլ՝ նառնաւորագոյն յե՛ղ ամեն, յե՛ղ ամեն ո՛չ
ամենաքինի Իմրեաաարք հայկական. զանանց
երջանկութեն յաւիտենական կենաց եցոյց մեզ Տէր
'ի մէջ աւետարանին՝ ասելով. Նմանեցաւ արքայ
ութեն երկնից առն վաճառականի՝ որ խնդրէր ըն
մարգարիտս գեղեցիկս. և գտեալ զմի պատուա-
կան մարգարիտ, երթեալ վաճառեաց զամենայն
ինչ՝ զոր ունէր, և գնեաց զայն մարգարիտ.
Եթէ ոք հարցանիցէ ոք՝ թէ ո՛վ էր այն վաճա-
ռականն. զի՞նչ խնդրէր. և ի՞ւ գնեաց. Ասեմ
լուեալ զայս ես՝ թէ վաճառականն այն է ճշմարիտ
և հանճարեղ մարդն՝ որ ունանի 'ի մէջ աշխարհի
որոնել զգանձս ոքւոյ, զերտաց և զերարկիմս.
Թայց եթէ ոչ ասանէ՝ թէ նոքա ամենեքեան ու-
նայն են, եթե զայս մասց ինչ, գտանէ զմա-
նաւորն ճշմարտութեն, զյարգն ամենաքինութեն.
զպատուին անանց երջանկութեն. ունանի վաճառել
զամ զոր ունի, և գնէ զայն մարգարիտ. այսինքն
Քրիստ է՝ ապաւէ զամ աշխարհական ինչ, և զերկնա-
նիւ ճգնութեն, և հասանէ յայն ճանապարհ.

Ա.

Ուրեմն աղէտամատուան հաճախաւորութեանց. եղէ՛ք ՚ի բա-
դէր դաստիարակութեան մարգարէ՝ ճշմարիտ տիգերա-
թեան և բարեդաշնութեան. հաճախեսցէ՛ք դրախ-
ակն ժամանակս կենաց յեր, և գնեսցէ՛ք զայն մար-
գարիտ՝ զիմաստութեան ամեն տեսակն՝ որ ցանկա-
լի նէ քան զամ ազնիւ դաստիարակութեան, քան զոսկի
և զարդարելոյն՝ քան զսերովբէութեանն. Մի՛ զե-
ժամանակեն զայն՝ որ քան զաշխարհն՝ է երկրաւոր
շնորհաւոր և փափաքելն. այլ զայն՝ որ իջեալն է ՚ի
վերուստ. որ ուսուցանէ զհանճար հեզութեան և
սիրոյ. ահե՛ր ամեն, քան իմա ինձ զայն և զեղջ-
րբն, զառաջինութեան և զընդունելութեան երջանկու-
թեանն. զի այլ ցանկութեան բաց ՚ի սոցանէ՝ երկ-
րաւոր է, շնորհաւոր և փափաքելն. Ուրեմն յայս
միտ ընթերցողաց զերփերթեալն զայս հրաւէրս.

Ուսմա՛յն է կենդանի՝ աւէ իմաստ ուն,
յորում անզգայ մեղ՝ օթևան և տուն.
փութացո՛ւք ուրեմն՝ ՚ի մեր հայրե նեաց,
յորում բնակի՝ բարեն ինչն բուն.

Ո՛չ է ապ թէ վարժիլ՝ և թէ այր գի տուն,
աշխարհն լինել՝ դէպ այն որ թուն.
այլ ամէն յոր հրաւէրն՝ հարդէ մեղա ցի,
աշխեցու կարգա՝ գիտնոց երա տուն.

՚Ի գան

[illegible]

# ՎԱԽՃԱՆ·